Սովի ու համաճարակի հետ, երկրում խախտուած էր և ապահովութիւնը: Դասալիք զինուորներ, ապրուստի միջոց չունեցող գաղթականներ ու տեղացիներ, խմբերով և անհատ-անհատ, յարձակւում էին ճամբորդների վրա, թալանում տները, խանգարում հանրային անդորրութիւնը: Հասարակական չարիք էր դարձել, այսպէս կոչուած «մաուզերիզմը» — մաուզերով զինուած մարդիկ չահատակութիւններ էին անում նոյնիսկ մայրաքաղաքի փողոցներում, և խաղաղ բնակչութիւնը տառապում էր նրանց ձեռքին:

Դրութիւնը քանի գնաց ծանրացաւ: Մինչև հոկտեմբեր գրեթէ վերջացաւ Հայաստանի սահմաններում գտնուած հացի պաշարը: Դրսից ոչինչ չէր գալիս: Պետական և հասարակական ամբարները պարապ էին: Ստեղծուեց սարսափելի կացութիւն: Ո՛չ միայն գաղթականութիւնը, այլ և տեղացիներից շատերը մատնուեցին սովամահութեան: Եւ այս զարհուրելի վիճակը տևեց մինչև 1919թ. գարունը, երբ հասաւ ամերիկեան ալիւրը: Սովը առանձնապէս ահռելի ձևեր ընդունեց Սուրմալուի և Ալեքսանդրապոլի շրջաններում:

Վեց ամսւայ ընթացքում, սովից ու հիւանդութիւններից, Հայաստանում մեռաւ մօտ 180,000 մարդ: Թիւրքերը գտել էին կոտորածի նոր ձև՝ աւելի իրական և աւելի անաղմուկ: Մի վեց ամիս ևս և Ռուսահայաստանն էլ կը հասնէր Թիւրքահայաստանի օրին: Արժէ՞ր այդ պայմաններում կռիւ անել, զօրամասեր զրաղեցնել, ի զուր տեղը արիւն թափել: Հայաստանի գործը յանձնելով սովին ու տիֆին՝ Թիւրքերն իրենց գլխաւոր ուժերը ուղղել էին Բաքուի դէմ:

Թիւրքիայի ներկայացուցիչը Երևանում՝ Մեհմէտ Ալի փաշան «մարդասիրաբար» օգնում էր կառավարութեան՝ մերթ ընդ մերթ «նուիրելով» կամ ծախելով Հայաստանին մի քանի վագոն ցորեն հայերից յափշտակուած պահեստներից: Եւ միաժամանակ, միջոցներ էր ձեռք առնում Հայաստանում ապրող մահմետականութիւնը փոխադրելու Սուրմալուի ու Սարդարապատի շրջանները՝ ձգտելով մի կողմից սովից ու հիւանդութիւններից ազատել մահմետական զանգուածները և միւս կողմից՝ նախկին հայկական վայրերը բնակեցնել մահմետականներով:

Եւ, հակառակ այս դժոխային պայմաններին, հայ ժողովրդին ու նրա ղեկավարներին յաջողուեց յաղթահարել դժուարութիւնները և, ճիշտ է մեծ զոհերով, կենդանի դուրս գալ օրհասական պայքարից:

Հայաստանի Խորհրդի և կառավարութեան առաջին գործը եղաւ լարել ու գործի դնել կառավարական մեքենան: Կազմակերպուեցին նախարարութիւնները: Վերակազմուեցին բանակն ու վարչական հիմնարկութիւնները: Կանոնաւորուեց զինուորականների ու պետական պաշտօնեաների ռոճիկը: Միջոցներ ձեռք առնուեցին դատարանների բարեկարգութեան ու դպրոցների բացման: Խոշոր գումարներ յատկացուեցին գաղթականների խնամատարութեան և աշխատանքի գործի կազմակերպութեան, որբերի հաւաքման ու պահպանման, պարենաւորման մթերքների հայթայթման համար: Մի առ ժամանակ, մինչև սեփական օրէնսդրութեան իրականացումը, Հայաստանի սահմաններում ընդունուեցին նախկին ռուսական օրէնքները՝ ժամանակաւոր